

1843 ԲԱՉՄԱՎԷՊ 1914

ՀԱՆԳԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ՀԲ
ՄԱՅԻՍ
թ. 5

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ՀՆԱԳՐԱԿԱՆ

ՆՄՈՅԵ Մ'ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԱՆՈՒԹԵԱՆ

Ե Լ

ՀՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍԻ

Այնքալ տարի մինչ ամէն կողմ ազգային գրի և տպագրութեան զարգադարձները տօնուեցան, հազիւ հօծիւնով մը յիշուեցան նաև ինչ ինչ անուններ և բոլորովին մուռացուած լուեցան դեռ շատեր, և ո՛ր փութ մինչև ե՛րբ դեռ պիտի լուծին անգիտուած. անուններ որ կարող են պարծանաց զուլփ մը բանալ մեր ազգային զարգացման պատմութեան մէջ. անուններն են ասոնք այն հռչակաւոր կամ խոնարհ արուեստագէտներու, որոնք իրենց կենաց զբօսանքը, իրենց աչաց լոյսը զոհած են եղէգ մ'ի ձեռին և հինայի պնակիկ մ'առջևնին, գծելու, գունելու և զարդարելու գրչագիր մատենաներ զալարապտոյտ ուրբներով, երփներփի դրասանգներով, կամարներով և գունագեղ նկարներով:

Այն առթիւ ուզեցինք երախտագէտ ակնարկ մ'ուղղել բոլոր այս ծանօթ և անծանօթ արուեստի նահատակներու և Քաղմաղէպի Յորելինական Պրակին մէջ հրատարակութեան տալ տասնեակ տարիներ առաջ պատրաստուած Ուսումնասիրութիւն մը ազգային Հնագրութեան և Մանրանկարչութեան վրայ: Ժամանակի և տեղոյ սղութիւն՝ խափանեցին այն ատեն մեր դիտման իրազօրծումը, և այսօր ազնիւ բարեկամի՝ մը կը պարտինք՝ եթէ անսալով իր թեւադրութեանց՝ այս համառօտ տողերը կը նուիրենք մեր նախնեաց յիշատակին՝ որոնք հայ անուան պարծանք հանդիսացած են գեղարուեստից ասպարիզին մէջ, Ժ-ԺԶ դարերու ընթացքին:

*
*

Անոնք որ զբաղած են արեւելեան ազգաց պատմութեամբ և գեղարուեստով՝ գիտեն

1. Պ. Աբշակ Զօպանեան, որ Աղեքսանդրի առաջապէս զբաղ հրատարակութիւն մը պատրաստած ըլլալով, կը փափագէր մեր մատենադարանի հռչակաւոր ձեռագրին ալ մի քանի նմոյշներ կարենալ գտնելու իր երկասիրութեան մէջ, որուն փութով լոյս տեսնելը կը մաղթենք:

թէ որպիսի՝ անսպառելի բով մ'ունին իւրենց առջև. արեւելեան տաղանդի բազմապիսի զանազանութիւնը, ճկուն՝ դիւրաթիւք ոգին, ընտրող և իւրացուցիչ ճաշակը, բուռն և անդուսպ կրքի հետ խառն՝ դիւրավառ և անսանձ երեակայութիւնը, հնու-թեանց կառչուն յարումը և նորութեանց խանդոտ իղձն ու սէրը կը շուարեցնեն քննասէրը, որ եթէ անկեղծ է, հաւատ-չեայնելու առատութեան մէջ իսկ ստի-պուած է առ խարխափ միայն քալել, և զգուշանալ որ և է վճիռ հատանելէ։ Եւ եթէ այսպէս է ընդհանուր արեւելեան ազգաց համար, ինչ պիտի ըստի յատկապէս մեր ազգին համար, որ արեւելեան ամէն յատկութիւն ծայրագոյն աստիճանի մէջ ունենալէն զատ, իր ոգեկան յուզմանց վրայ, արտաքին ազդակներու ալ բռնու-թեան ենթարկուած է։ Ինչ պիտի ըստի մանաւանդ՝ երբ ամփոփուի քննասէրն գեղարուեստի ամենանուր բաժնի մը մէջ, ինչպէս է հնագրութեան և մանրանկար-չութեան բաժինը, և ուզէ զայն ուսու-նասիրել առանց ունենալու առաջնորդ մը՝ ուղղելու զինքն անոր հետոց վրայ, և օրինակներ՝ անոնց նման ձեւելու համար իւր տեսութիւնքն ալ, մանաւանդ երբ շատ իրեր անձամբ քննելու անկարող է։

*
* *

Ազգային հնագրութեան և մանրանկար-չութեան ուսումնասիրութիւնը երկու մասերէ անշուշտ պիտի բաղկանայ, որոնց մին զրեթէ զուտ պատմական է և միւսը զրեթէ զուտ արուեստական. մին՝ պատ-կանող գիրի և գիրքի, և միւսը յատուկ գիծի և նկարի։

Թէ ինչ է գիրն, ուսկի՞ց է իւր ծա-գումն, որոնք են զանազան տեսակներն, դարերու մէջ առած ձևերն, որոնք են զրչութեան առարկաներն՝ քաղ, պրտու, աղիւս, մետաղ, փայտ, մագաղաթ, թուղթ և պատտառ. զրչութեան գործիչներն՝ սայ-րասուր, սլաքիկ, եղէգն, զրիչ փետրի, պնակիկ, սեղան, կաղամար, մելան կայլն։

որոնք են իւրաքանչիւրին յատուկ դա-րերն ու հայրենիքը. որոնք են հնագոյն զրչագիրք և ո՛ր կը պահուին. ինչ է նախնեաց գիրքերու կազմի արուեստն ու տեսակները, կիրարկուած նիւթեր կայլն. ո՛ր էին նշանաւոր դպրոցք զրչութեան, ինչպէս և որոնց միջոցաւ կը հրատարա-կուէին ու կը ծաւալէին մատեանք, ու-րոնք էին հնութեան նշանաւոր մատենա-դարանք, հեղինակք և այլն. այս ամէնը՝ կը կազմէ հնագրութեան բաժինը։ Ընդ-հակառակն մանրանկարչութեան կը պատ-կանին զարդեր ու զարդագիրք և նկարք. երբ և ո՛ր կը սկսին առաջին անգամ. որոնք են յաճախուած զարդաձեք (mo-tifs) և ո՛ր դարերու յատուկ. որոնք են նշանաւոր գեղագիրք. ինչպէս կը սկսին ձկնաձև՝ թռչնաձև տառեր. երբ կը մտնեն ասոնց հետ նաև դէմքեր. որոնք են ընդ-հանրապէս կիրարկուած գոյներն ու անոնց բաղադրութիւնք. ոսկւոյ թերթիկներու և փոշւոյ արուեստն. — նկարներ ու յօրի-նող գաղափար (composition). ճարտա-րապետութիւն մանրանկարի մէջ, ծաղ-կունք և կենդանիք. բնութեան պատկե-րացումն և դիմագծութիւն. որոնք են նը-շանաւոր մանրանկարիչք, ինչ են և ո՛ր իրենց գործերը. զանազան դպրոցք. զա-նազան օտար ազդեցութիւնք հայ արուես-տի վրայ. հայուն դերը գեղարուեստից տեղափոխութեանց ու փոխանցմանց մէջ ազգէ ազգ. հայն օրինակող իւրացուցիչ մ'է լոկ թէ նաև ստեղծող արուեստագէտ, են։ Այսպիսի և ուրիշ շատ հարցեր կը պատ-կանին մանրանկարի ուսումնասիրութեան, որուն կը պատկանին նաև զրոց կազմե-րու փորագրութիւնք, արծաթի և մետա-ղաց գործուածք, կիտուածք քարանց ու փղոսկրի, կիրառութիւն գոհարեղինաց և այլն, և հուսկ վարձատրութիւն և հատու-ցումն արուեստագիտաց։

Ասոնք են ահաւասիկ համառօտիւ այն կէտերն ու զուգները որոնք մեր ամփոփ տեսութեանց առարկայն կը կազմեն. ա-սոնց վրայ կրնանք յաւելուլ հիմայ նաև բաժին մ'ալ՝ վերջերս կատարուած նման-



օրինակ հրատարակութեանց և յօդուածներու հաւաքումն և տեսութիւնն:

Հայ Հնագրութեան վրայ բաւականաչափ ակնարկ մը հրատարակած է Գեորգ. Տաշեան 1898ին. բայց ինչպէս Հեղինակը՝ կ'ազգարարէ, Լիբանտար Հնագրութեան մը յօրինումը չէ եղած իր նշանակութեամբ, որով մեր յիշած իրերէն ինչ ինչ բոլորովին կը պակսի հոն, և յիշուածներուն ալ դասաւորութիւնը բոլորովին այլ ազգ է: Իսկ Մանրանկարչութեան համար ստիպուած ենք յայտնելու որ ցայսօր հանդիպած չենք զոհացուցիչ հրատարակութեան մը, ուր ազգային արուեստը պայծառ փայլի իւր եզակեան յատկութեամբը, որոնցմով կը զանազանի ասորական — բիւզանդական — յունական — պարսկական և նաև լատինական ոճերէ, որոնցմէ յաճախ ազդուած է և շատ վարդաձև տիպարներ ալ ի փոխ կ'առնու: Եւ ինչ որ աւելի տխուր է և դժուարացուցիչ մեր ձեռնարկին, հրատարակուած նմանահանութեանց ալ ամենասակաւ և ոչ միշտ լաւ յաջող բլլալն է: Կարելի՞ է միթէ՞ այս պարագաներու մէջ մանրամասն Ուսումնասիրութիւն մ'ընծայել ազգային Մանրանկարչութեան և Հնագրութեան. հարկ չէ՞ մանաւանդ որ նախ Զա-

նացուին մի առ մի հրատարակուիլ և ուսումնասիրուիլ զանազան հեղինակը և արուեստագէտը, ինչպէս վերջերս կատարուեցան Լազարեան ճեմարանի մատենաներէն մէջ գտնուած հնագոյն Աւետարանի¹, մեր մատենադարանի Մլըք Թագուհւոյն անուանուած Աւետարանի², Էջմիածնայ Աւետարանի³ նմանահանութիւնը և այլ մի քանի հրատարակութիւնը՝ ուր բաւական արտադրուած են նախնեաց արուեստի սոյնօրինակ յիշատակարանները և նմոյշները: Այս խորհրդածութիւնն ահա կը ստիպէ զմեզ շեղիլ առ այժմ մեր մշտադրած նպատակէն, և ընդհանուր ուսումնասիրութիւն մը հրատարակելէ առաջ, հարստացնել զեռ ատաղձներու հաւաքումը և այնու դիւրացնել քննասիրաց համեմատելի տարրերը:

Առնունք այսօր քննութեան նիւթ Աղեքսանդրի պատմութիւնը, ընծայուած Ստոյն-Կալլիսթենեայ, որուն նկարազարդ հայ օրինակներ կը գտնուին այլ և այլ գրատուններու մէջ և որոնց ամենուն սկզբնագիր և հնագոյնն կը թուի մեր մատենադարանի թիւ 424 զրչագիրը: Ուրիշ օրինակներ մեզի ծանօթ կը պահուին ի Պետլին, ի Մանչեսթր, ի Մինսխէն, ի Բարիզ և ի Վիեննա, որոնց փոխադարձ յա-

1. Հ. Թափոս Վ. Տաշեան. — Ակնարկ մը հայ Հնագրութեան վրայ. Ուսումնասիրութիւն Հայոց գրչութեան արուեստին (10 զեկտապի պատկերով). Վիեննա, Միխ. Կ. 1898:

2. Աւետարան գրչագիր ամի Տեան 887. Quatuor Evangeliorum versionis Armeniacae Codex A. DCCCLXXXVII. Լուստիկոյ հրատ. զրչագիր Լազարեան շէմարանի արեւելեան Լեզուաց. Մատենա 1899:

3. Զարչանկարք Աւետարանի Մլք Թագուհոյ բաւարդի Հ. Գ. Վ. Ալեքանի հրատարակեալ հազարամեայ յօրնիքի աթիւ (1902-1902) Վենետիկ. Ս. Գալար 1902:

4. Dr. Josef Strzygowski. — Das Etschmiadzin-Evangelium. Beiträge zur Geschichte der Armenischen, Ravenatischen und Syro-Ägyptischen Kunst. Mit 18 Illustrationen im Text und 8 Doppeltafeln. Wien 1891. Druck und Verlag der Mekhitharisten - Congregation in Wien. Հոս ունիք առաջին անգամ ձեռնհաս մանաւանդ շատ զանազան բայց ծանրակշիռ տեսութիւն մը հայ մանրանկարչութեան արուեստի վրայ: Այս տեսակետով մեծ օժանդակութիւն կ'ընծան մեր քննութեանց հոգաւոր արուեստագիտի հրատարակած ուրիշ բազմաթիւ

երկասիրութիւնց ալ:

5. Առնոց թիւն են անտարակոյս Հ. Գ. Ալեքանի հսկայական տեղագրութեանց հատորները՝ Արարատ-Սխառան-Սխառան-Շիրակ և Հայաստանում. նոյնպէս J. Mourier - La bibliothèque d'Edschmiadzin et les manuscrits Arméniens. Tiflis. Melikoff 1885. Ազգագրական շնորհիւ զանազան թիւեր. Գեոր. Հ. Տաշեանի և Հ. Բ. Սարգիսեանի Մայր Թագուհեան հայկական գրչագրաց վենետիկ և Վիեննայի մատենադարաններու. Fr. Macler. - Miniatures Arméniennes. Vies du Christ-peintures ornementales (Xme au XVIIe Siècle) 68 planches en phototypie avec texte explicatif. Paris. Librairie Paul Geuthner 1913 և այլ այսպիսի հրատարակութիւնք և յօդուածք զի ու ցան, Anton Brumstark. - Eine Gruppe illustrierter armenischer Evangelienbücher des XVII und XVIII Jahrhunderts in Jerusalem. (Monatsschrift für Kunstwissenschaft 1911. Heft 6 և 249-260). P. S. Abdullak et Fred. Macler. Etudes sur la miniature Arménienne. Paris 1909 (Revue des Etudes Ethnologiques et Sociologiques), և այլն:



բարերութեանց կապերը պիտի կարենանք աւելի ստուգիւ համեմատել Պ. Ա. Զօպա- նեանի վերոյիշեալ երկասիրութեան հրա- տարակուելէն վերջ միայն. առ այժմ կը դնենք ինչ որ մեր գրչագիրը կը պարու- նակէ և այսու գոհանանք:

*
**

Աղեքսանդր Մեծին արշաւանքները, իր դիցազնական յաղթանակները, քրազ ա- րագ նուաճելը մինչև այն ատեն անյաղթ կարծուած պետութիւնները և անծանօթ մնացած գաւառները, իր բարեսէր և քաղ- ցրաբարոյ վարմունքը, բոլորովին հակոտ- նեայ ժամանակին իշխողաց, և մանաւանդ իր ճոխութեանց անսպառ գանձերն ու վաղահաս և աղետալի մահն օտարութեան մէջ և փառաց գագաթնակէտին վրայ, բա- ւականէն շատ աւելի նիւթեր էին, որոնք պիտի ոգևորէին զուսմաններու և երգիչնե- րու երկակայութիւնն ու խանդը և ժողո- վրդեան մէջ իր համրաւն հետզհետէ բար- դուելով ու զօրանալով՝ աստուածութեան լուսասփիւտով մ'ալ պիտի պատէին իւր դէմքը: Եւ այս եղաւ իրօք. պատմիչը եր- գեցին իր փառքերը, տաճարներ կանգ- նուեցան իր անուան և քաղաքներ իրա- րու հետ կը մրցէին իրեն անուամբ կո- չուելու տենչով: Այսպէս շուտով, և նոյն իսկ Աղեքսանդրու մահուամբ իսկ ծնաւ, իր ստոյգ պատմութեանէն առաջ, իր առաս- պելական արշաւանաց ու վարուց պատ- մութիւնը: Այսօր, յետ այնքան դարերու աւերածին, զեռ մատենադարաններ լի են զանազան հեղինակներու գործերով, ու- րոնց նիւթն է Աղեքսանդր, և կան դեռ շա- տեր՝ որոնց անունը միայն կը յիշուի ըս- տին հաւաքողներէ և թարգմանողներէ: Մեր նպատակէն դուրս է բոլորովին այս առասպելաց ծագմամբ ու զարգացման և ձևափոխութեանց պատմութեամբ զբա- ղիւ: Գլխաւոր մատենագիր մը՝ որ ամէնէն աւելի տարածուածն և ընդհանրացածը կը թուի, է զեռ անծանօթ հեղինակ մը՝ յոյն- թերևս եգիպտացի — որ և բանասիրութեան

մէջ ամենածանօթ է Սուտ — Կալլիսթենէս անուամբ: Եգիպտոսէ ծագելով շատ հաւա- նաբար այս առասպելաց ընթացքը, հըս- կայաքայլ յառաջադիմած է, մանաւանդ միջին դարուց մէջ, աշխարհիս ամէն կող- մերը:

Հոովմէական կայսրութեան վերջին ժա- մանակներն արդէն լատին խմբագրութիւն- ներ ու թարգմանութիւններ ալ սկսան երևան ելլել և շատ արագ ծաւալեցան թէ՛ Բիւզանդական կայսրութեան սահման- ներու մէջ և թէ՛ եւրոպական նահանգնե- րու մէջ: Միջին դարերու ասպետական հոգին ասկէ աւելի յարմար նիւթ էր կրնար գտնել իր երկակայական թոհնե- րու և իր առօրեայ կենցաղին ճշմարիտ պատկերացման համար: Մինչև իսկ խաղէ թուղթերու վրայ Մեծին Կարողոսի զոյգ՝ Աղեքսանդրի պատկերներ ալ երկցան Գաղ- դիա, Անգլիա, Գերմանիա երկոտասանե- րորդ դարէն՝ արդէն ունեցան իրենց ա- դեքանդրեան աւանդութիւնները: Շուտ և խալիւ չորեքտասաներորդին մէջ, ինչպէս նաև Ռուսիա, Սերպիա, Պուլկա- րիա և այլն՝ քիչ ատեն վերջ: Անոնցմէ շատ աւելի առաջ է ժամանակաւ արևե- լեան ազգաց մէջ ծաւալումն, որոնց մէջ անտարակոյս առաջին տեղին կրնայ բռնել Պարսկաստան, ուր իսկէնտէր անունն շատ կանուխ հռչակուեցաւ և անոր շուրջ բոլո- րուած աւանդութիւնք պարսկական հոգւոյ շատ համաձայն և հաճելի էին: Կարելի չէ՝ արդեօք համարիլ որ հայ երգիչներն ալ յայտն իրենց արդիւնքն ունեցած ըլ- լան, իբրև հայ և գեղարուեստի փոխա- ղորող տեղէ տեղ. և միթէ այն երկու հռչակաւոր հայ երգիչ գուսաններն, մըր- ցակիցք իրարու և փառակիցք, Սարգիս և Կարապետ, որոնք խոսրով Բերուիքի ժա- մանակ (590 — 628) Սասանեան արքու- նեաց զարդերն էին, կրնային չհիսել Ա- դեքսանդրի վարքն ու արշաւներն ալ ի- րենց երգերուն, որոնց համբաւը միայն հասած է առ մեզ և հետքերն ամբողջա- պէս կորսուած: Ֆիրտուսի կը յիշատակէ զասոնք, առանց հայ ըլլալնին յայտնելու



և միոյն անունն ալ ծոելով ի Պարպետ. սակայն մեզ համար անտարակոյս է այս, ինչպէս այն պարագայն թէ քան զՊարպետ աւելի բաղդաւոր էր կարապետ և զրե-

հայրը, ազնուախոհ և մեծանձն երգիչը կրակարանի մէջ նետեց իւր քնարը և աջ ձեռքին մատները կտրատեց, որպէս զի չի բռնադատուի անարժան տիրոջ մը ծա-



4. — Վարք Աղեքսանդրի էջ 180 (23 X 16)

թէ արքունեաց enfant gâté-ն, որ և փոխադարձ, զարմանալի աննման զոհողութեամբ մը ցուցուց իւր հաւատարիմ սէրն առ իր բարերարն խոսրովէ կ'աւանդուի յիրաւի որ երբ արքայորդին ապեւրախտ ու վատ հոգեով սպաննել տուաւ իւր

ռայելէ Որպիսի տխուր հակադրութիւն. նոյն ժամանակի ազգային պատմութիւնը շարք մ'ունի բնիկ իշխանաց ու թագաւորաց դէմ դաւաճանող ու մատնիչ հայ անուններու, մինչ հոս օտար Պարսկաստանի մէջ հայ մը իւր արուեստն ու տա-

դանդը լուսինան կը մատնէ, ասպետա-
կան զգացմամբ ու զոհողութեամբ, իրեն
սիրելի թագաւորի մը նուիրական յիշա-
տակին համար:


առաջնութեան պատիւը, քան ուրիշ ամէն
ազգեր, աւելի մեզ կը պատկանի. ունինք
թարգմանութիւն մը որ արդէն հինգերորդ
դարու վերջերը կը հասցնէ զմեզ. անընդ-



5. — Վարք Աղեքսանդրի էջ 181 (24,5 × 16,5)

Երբ արդեօք և ինչպէս և որո՞նց ձեռ-
քով այս աւանդութիւնները մտան նաև
Հայաստան, որոշ թուական և անուններ
չենք կրնար տալ, և երկար քննութիւնը
ալ կարևոր չեն մեր յառաջագիր նպա-
տակին համար, բաւական է գիտնանք որ

հատ յիշատակութեանց շարք մը դարէ ի
դար՝ կը ցուցնէ թէ ո՞րքան տարածուած
ու ծանօթ էին մեր մէջ այն աւանդու-
թիւնը. սակայն ամէնէն աւելի ծաւալման
ու զունագեղման շրջան մ'ունեցան կիլի-
կեան հարստութեան ծաղկելուն՝ ԺԲ-ԺԳ.



6. — զարք Աղեքսանդրի էջ 190 (23 X 15)

դարերու մէջ, այն միջոց երբ եւրոպական խաչակիր ասպետներ, ասպետական հոգին ու սովորութիւնները կը մտցնէին մեր ազգին քաղաքի և տոհմիկ պատանեաց արեան մէջ, խաչակիրը ունէին ամէնքն իրենց ասպետական աւանդութեանց երգերն ու գիրքերը, որոնցմով՝ վրաններու ներքև, լուսնկայ գիշերներու խաղաղութիւնը կը զուարճացնէին. հայերն ալ հանեցին դուրս իրենց աւանդական երգերը, և անշուշտ

առաջիններէն մին ալ եղաւ Աղեքսանդրեան աւանդավէպս: Այնուհետև յորդեցին այս առասպելաց օրինակութիւնը, և շքեղ մատեններ յօրինուեցան գունագեղ նկարներով ու զարդերով: Աղեքսանդր եղաւ ամենուն ծանօթ զիւցազ մը և արուեստագէտը իրենց տաղանդը փայլեցուցին անոր արութեանց և վիպաց նկարներն յօրինելով կամ օրինակելով:

Այսպիսի հատոր մ'է ահա զոր առջև



7. — զարք Աղեքսանդրի էջ 191 (25 × 16)

նիս ունինք և զոր կը փափաքինք ծա-
նուցանել մեր ընթերցողաց: Ո՛ր ժամա-
նակի կը պատկանի այդ, ո՞ր հեղինակի
գործ, ո՞ր արուեստագետի օրինակութիւն
կամ ստեղծագործում, և ի՞նչ ազդեցու-
թեան ենթարկուած է նկարիչը, որոշ
կերպով չենք կրնար վճռել. հաւանական
ենթադրութիւններ միայն պիտի ըլլան մեր
տեսութիւնը, քանի որ վճռական սահ-

մաններու համար կը պակսին մեզ դեռ
համեմատութեան զանազան իրեր ու պա-
րագաներ:

Մեր ձեռքն եղած գրչագիրը, որ իբրեւ
հիմն առնուած է նաև 1842ի հրատարա-
կութեան, առիթ տուած է ժամանակա-
գրական վիճարանութեան մը, դեր ու դէմ
տեսութիւնը, ինչպէս յաճախ, հաւանա-
կան վճռոյ մը դեռ յանգած չեն. Հրա-

տարակիչը¹ կը համարին զայն երեքտա- սաներորդ դարու գործ, մինչ ըստ այլոց աւելի յետնագոյն՝ քանի որ կը պարու- նակէ Խաչատուր Կեչառուեցոյ կաֆանե- րը: Ինչ ինչ հանգամանք կը հաւաստեն հրատարակչաց կարծիքը, եթէ նկատենք գրչագրին արտաքին հանգամանք, թուղթը, գրութեան տեսակն, նկարներու զծագրու- թիւնն, գործածուած գոյներն կային: Ուրովհետեւ չենք ուզեր ընդարձակ ժամա- նակագրական ուսումնասիրութիւն մ'ընել, կ'ամփոփենք համառօտիւ մեր անձնական տեսութիւնը այս օրինակիս ժամանակին և հանգամանաց վրայ, և կը յուսանք թէ շատ հեռացած չըլլանք ստուգութենէ երբ հաստատենք հետեւեալ կէտերը:

1^o. — Ըստ ամենայն հաւանականու- թեան մեր գրչագիրը կը պատկանի ԺԴ. դարու վերջին տարիներու, կամ ԺԴ. դարուն առաջին տասնեակներու:

2^o. — Կարմրագիրք, որ Կեչառուեցոյ կաֆաները կը պարունակեն, գրուած են և յաւելցուած գրչութենէն քիչ վերջ, թե- րևս նաև մի և նոյն օրինակողի ձեռամբ: Թամենայն դէպս առաջին գրողն իւր աշ- խատութեան միջոց բնաւ նպատակ ու- նեցած չէ զանոնք օրինակելու: Այդ՝ յե- տոյ եկամուտ մտածութիւն մ'է լոկ:

3^o. — Այս գրչագիրն ալ ինքնին նա- խագաղափար մը չէ, այլ օրինակուած է ուրիշ հնագունէ մը:

4^o. — Նկարներն ալ օրինակուած կ'ե- րևին, ուրիշ օրինակէ մը որ ժամանակա- կից էր անշուշտ. — եթէ նկարիչն ինքն է հոս ստեղծագործող արուեստագէտը, պա- տրաստած է նախ ուրոյն իւր նկարները և յետոյ այս տեղ կրկին օրինակած:

5^o. — Նկարիչը շատ հարուար և փորձ է իւր արուեստին մէջ. հայ մ'է որ զիտէ լաւ արեւելեան տիպարներն և միանգա- մայն ծանօթ է իրզանդական արուեստի

ներութեանց և երանգոց փափկութեան. կը ճանչնայ վասիլեան (վասիլ Բ.) շըր- ջանի գրչագիրները (որոնք այսօր եւրո- պական մատենադարաններու զանձներն են), Մեծին Կարողոսի ասպետական շըջանի մանրանկարները, Փրեզբերիկոս Շիկամո- րուսի և Ոթոն Գ.ի սպաներու տարագ- ները, ինչպէս նաև Տևտոնեան ասպետնե- րու ցանցապատ զրահներն ու սաղաարտ- ները: Այս վերջիններս այնպիսի յաճախու- թեամբ ու ճիշտ կը պատկերացնէ, որ ան- կարելի է տարակուսիլ բուն իսկ իր աչաց առջև զանոնք ունենալուն: Ունի իր դա- րուն զլիաւոր թերութիւնն ու տգիտու- թիւնը, այս է հեռանկարի (perspective) ծանօթութեան պակասութիւնը, որով ան- կարող է իւր պատկերներուն մէջ ո'չ խո- րութեան զաղափար մը դնել և ոչ զանա- զան մակարդակներն իրարմէ հեռացնել ու անջատել: Բայց այս, կը կրկնենք, իր անհատական պակասութիւնը չէ, այլ դարուն նկարչական արուեստի դեռ ան- կերպարան ըլլալուն հետեանք: Այս հան- զամանքը կու տայ մեզ ամէնէն աւելի համարձակութիւն ձեռագրիս ժամանակը բուն ԺԴ-ԺԴ. դարերու մէջ ամփոփելու, որովհետեւ մեր հեղինակին կարողութեամբ ու հմտութեամբ նկարիչ մը՝ հեռանկարի բաւական վարժ պէտք էր գտնուիլ:

Թերևս համարձակէինք այս հայ նկարչիս անուն մ'ալ տալ եթէ քիչ մ'աւելի հաս- տատուն կոռուան մ'ունենայինք: Աղեք- սանդրի առասպելաց պատմութիւնն օրի- նակող ու նկարազարդող յանուանէ ի մեզ կը յիշատակուին Զաքարիա և Յովսէփ²: Զաքարիա եպիսկոպոս էր Գնունեաց, որ երկու անգամ զայն օրինակած ու նկա- րագեղած ըլլալն անձամբ ևս յիշատակէ. «զարդարեցի ոսկով և տնաւորինականով և աւտանաւորով», նախ ի Հոովմ վանն Եսայի անուն վարդապետի մը և ապա ի

1. Հմտ, մասնաւորապէս, «Պատմութիւն Աղեքսան- ցի Մակեդոնացւոյ, ի վննտիկ 1842»։ Յատաշարան, և Հ. Յով. Վ. Տաշեան. Ուսումնասիրութիւնք Ստոյն- Կալիֆորնիայ վարուց Աղեքսանդրի, Վիննա, 1892. ևայլն, ինչպէս նաև Հ. Ներսիս Վ. Ալիքեան. — «Զա-

քարիա եպ. Գնունեաց և իւր տաղերը» (Հանդէս Ամս. 1909 էջ 281 ևայլն), Հ. Վ. Ալիքեան Այրարատ (Տե- ղադարձութիւն) էջ 268 ևայլն, Սխուման, էջ 399.

2. Տես նաև Հ. Ն. Ալիքեան վերոյիշեալ յօդուածն, էջ 284.





9. — Վարդ Աղեքսանդրի էջ 202 (23,5 × 14,5)

Սուրբ Մանասիր Կ. Պոլսոյ 1544ին
8էր Աստուածատուր պատրիարքի փա-
փաքանօք: Ասոր ժամանակակից և ա-
րուեստակից էր Յովսէփ Սեբաստացի,
որ «1535ին օրինակած է նկարներով և
այլն կալիսթենէսի գործն, որ այժմ կը
պահուի Բերլինի Մատենադարանը»: Ա-
սոնց երկուքին ալ ապրելու ժամանակն
ու զրչագրիս հանգամանք չեն թողուր որ
համերաշխ հաշտութիւն մը փորձենք ի-

րենց միջև ժամանակի անջրպետը վերցու-
նելով: Կարելի՞ է արդեօք համարել որ յի-
շուած Չաքարիան այլ ոմն ըլլայ հին քան
զԳինունեաց եպիսկոպոսն. զայս պիտի կա-
րենար ապահովապէս մեզի ըսել ազգային
բանասիրութիւնը, որ դեռ ի կողմն Գնուն-
ւոյն կը հակի հզօրապէս:

Հիմայ վերոյիշեալ կէտերու մէջ մեր
տեսութիւնքն ամփոփելէ վերջ կը ֆնայ
յետին՝ բայց կարևորագոյն՝ կէտ մ'ալ նը-



10. — զարք Աղնքսամղրի էջ 203 (24,5 × 15)

կատելիք: Արդեօք արևելեան ազդեցու-
թիւն մ'ալ չենք նշմարեր մեր օրինա-
կին մէջ. կարելի՞ էր որ Պարսկաստանէ
Հայաստան չանցնէին աղեքսանդրեան վե-
պերու նկարազարդ օրինակներ, և կամ
մեր միջնադարեան զինուորականը անդա-
դար Միջագետաց և Եգիպտոսի հետ յա-
րաբերութեաց ու երթևեկներու միջոցին
չճանչնային արաբական օրինակներն ալ
և անոնց նմանել չփորձէին: Կը ցաւինք

որ լոկ բարեկամի մը տեղեկատուութիւնը
մեզի կը ծանօթացնէ Պահլէի խտրական
Թանգարանի շքեղազարդ օրինակը, այ-
լուստ առիթ չենք ունեցած բնաւ զայն
աւելի մերձ ճանչնալու և ուսումնասիրե-
լու, որպէս զի համեմատութեան եզր մը
գտնէինք արաբ և հայ արուեստագիտաց
մէջ. իսկ պարսկական ազդեցութիւնը այն-
քան կը փայլի հոս՝ որքան պիտի սպա-
սուէր հայէ մը որ զրացութեան յարարե-

բուժեամբ կապուած է միշտ պարսից կեանքի և արուեստի հետ: Այս հայ և պարսիկ արուեստագիտական յարաբերութիւնը բաւական խնդրական են, և կ'արժէ որ առ վայր մը շեղի ենք և առիթ առնելով հոս շեշտենք՝ որ հայն պարսկական արուեստէ բան մ'առած չէ. նա գտնուած է միշտ՝ արուեստից նկատմամբ՝ երկու զօրաւոր հոսանաց ներքեւ, Բիւզանդական և ասորական. և Փոքր Ասիայէ—Միջագետք ինքն եղած է կերպով մը փոխանցող արուեստի ճաշակի և ոճերու, որով ձեւացուցած է նախ իրեն համար յատուկ արուեստ մը՝ խառն Ասորի—Բիւզանդական տարրերով, և ապա զայն ներմուծած է նաև ի Պարսկաստան: Այս տեսութիւնը մի քիչ չափազանցուած թերևս պիտի երևի ոմանց, սակայն խոր քննութիւն մը կը յուսանք որ հաւանել տայ՝ նոյն իսկ ոչ շատ տրամադրեալներուն ալ: Յիշենք որ այսօր եւրոպայի մէջ այլ ևս նոյն իսկ կը տարակուսուի թէ արդեօք բուն պարսկական արուեստ մը գոյութիւն ունեցած է թէ ոչ, Պարսկաստանի ամենամեծ գեղեցկագիտական գործերն են իւր յախճապակիներու կիտուածքն ու գործուածքն. և սակայն լսենք թէ ինչ կը մտածուի այս նկատմամբ:

L'Art Ornemental նկարագրելով Sèvresի թանգարանին յախճապակեայ պընակ մը՝ պարսկական արուեստիւ, կը գրէ. l'historien céramiste, dit M. Jacquemart, est dans cette situation singulière de ne pouvoir assigner aucune date aux premières œuvres de la Perse et de ne savoir si les traditions de cette contrée remontent à l'antiquité ou au Moyen âge, proviennent de l'extrême Orient, de l'Asie Mineure ou de l'A-

rabie. Եւ զանազան դիտողութիւնները նելէ վերջ՝ կը յաւելու. Disons en terminant que s'il est difficile de retrouver toutes les fabrications de la Perse, il est peut-être plus difficile encore de distinguer les poteries persanes de celles qui sont originaires des pays voisins'. Ուրիշ առիթիւ մ'ալ կը դառնայ նորէն մի և նոյն խնդրոյն վրայ և ընդհանրացնելով խօսքը գեղարուեստի որ և է ճիւղի և արտայայտութեան վրայ առ հասարակ, կը գրէ. On a dit avec beaucoup de vérité qu'en fait d'art les Persans d'aucun temps n'ont jamais rien inventé, mais qu'ils ont su tout s'assimiler et fondre leurs acquisitions dans un ensemble si heureusement lié qu'il a l'air de leur appartenir. Ce que les Persans ont possédé au plus haut degré, c'est l'esprit de compréhension, la puissance de comparaison et une sorte de critique qui leur a permis de combiner avec bonheur des éléments parfaitement étrangers les uns aux autres³.

Այս վերջին դատաստանս Պարսիկներէն աւելի անշուշտ կը յարմարի Հայոց և հայ արուեստագիտաց, որոնք համազգային զարգացման համար ուրիշ ամենամեծ արդիւնք մ'ալ ունեցած են, հեռաւոր ազգաց և տեղեաց արուեստը փոխադարձ իրարու մէջ ծանօթացնելու և ծաւալելու, ինչպէս իրենց յատուկ էր մեծաւ մասամբ վաճառականական յարաբերութիւններ մշակել զանազան ազգերու մէջ:

Այսպէս ամփոփելով առ այժմ մեր խօսքը, դառնանք բուն իսկ մեր նիւթին և զիտենք Աղեքսանդրի պատմութեան մեր օրինակը և իւր պարունակած նկարներու էութիւնն ու արուեստը³:

Հ. Յ. ԱԻԳԻՐ

(Շարայարկի)

1. L'Art Ornemental 15 Mars 1884 էջ 26 և 27.
2. Անդ 1885. 15 Août էջ 109.
3. Տեղւոյ պոէթիւնն ստիպեց զմեզ նկարներու մի քանին արտատպել հոս յաջորդ պրակին պահելով անոնց նկարագրութիւնը: